



IFLA Section Environment, Sustainability and Libraries

[January 2022](#)

<https://www.ifla.org/g/environment-sustainability-and-libraries/ifla-green-library-definition/>

Ի՞նչ է Կանաչ գրադարանը:

Շրջակա միջավայրը մեր շրջակայքն է և/կամ պայմանները, որտեղ ապրում ու գործում են մարդիկ, կազմակերպությունները, կենդանիները կամ բույսերը: Միջավայրը կարող է լինել բնական, սոցիալական կամ մշակութային:

«Կայուն զարգացումն այն զարգացումն է, որը բավարարում է ներկայիս կարիքները՝ չվնասելով ապագա սերնդի սեփական կարիքները բավարարելու կարողությանը» (Մեր ընդհանուր ապագան, Բրունդլենդի զեկույց, ՄԱԿ):

Այսօր շրջակա միջավայրը վտանգված է կլիմայական փոփոխություններով և այլ սպառնալիքներով, ներառյալ սոցիալական անհավասարությունը:

Բոլոր կազմակերպությունները կայուն զարգացման միջոցով պետք է աշխատեն պահպանել շրջակա միջավայրը: Խոսքը վերաբերում է նաև բոլոր տեսակի գրադարաններին, որոնք կարող են ակտիվ և նշանակալի դեր կատարել կայուն զարգացման գործում:

Կանաչ և կայուն գրադարանը հաշվի է առնում բնապահպանական, տնտեսական և սոցիալական կայունությունը:

Կանաչ և կայուն գրադարանները կարող են լինել ցանկացած չափի, բայց պարտադիր ունենան կայունության հստակ օրակարգ, որը ներառում է.

- **Կանաչ շենքեր և սարքավորումներ.** շենքի և սարքավորումների արտանետումները կամ ածխածնի հետքը ակտիվորեն նվազում է:
- **Կանաչ գրասենյակի սկզբունքներ.** գործառնական առօրյան և գործընթացները բնապահպանական առումով կայուն են:
- **Կայուն տնտեսություն.** սպառումը զուսպ է, շրջանակային և համընդհանուր օգտագործվող տնտեսության պրակտիկական զարգացած է և համայնքին հասանելի:
- **Գրադարանային կայուն ծառայություններ.** օգտատերերի համար հեշտ հասանելի է պատշաճ և արդի տեղեկությունը: Առաջարկվում են ընդհանուր տարածքներ, սարքեր և բնապահպանական կրթություն, իսկ գործողություններն արդյունավետ են: Գրադարանն ունի ածխածնի դրական ձեռքի դրոշմ:
- **Սոցիալական կայունություն.** կարևորվում է լավ կրթությունը, գրագիտությունը, համայնքի ներգրավվածությունը, միջմշակութային բազմազանությունը, սոցիալական ներգրավվածությունը և ընդհանուր

մասնակցությունը: Գրադարանն ակտիվորեն աշխատում է անհավասարությունը նվազեցնելու ուղղությամբ:

- **Շրջակա միջավայրի կառավարում.** բնապահպանական նպատակներն են SMART (Specific` Հատուկ, Measurable`Չափելի, Achievable`Իրագործելի, Realistic` Իրատեսական և Timebound`Ժամանակի մեջ չափելի), և գրադարանն աշխատում է նվազեցնել իր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Գրադարանի բնապահպանական քաղաքականությունը, նրա իրականացումը և բնապահպանական աշխատանքների արդյունքը հաղորդվում է ավելի լայն լսարանի:

- **Պարտավորություն բնապահպանական ընդհանուր նպատակների և ծրագրերի նկատմամբ.** պարտավորությունն առաջնորդվում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներով, Փարիզի կլիմայի համաձայնագրով և բնապահպանական նմանօրինակ/հարակից հավաստագրերով ու ծրագրերով:

Անգլերենից թարգմանեց՝ Տիգրան Զարգարյանը